ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2023 թվական N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 105-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման յոթերորդ միջոցառման շրջանակում մասնավոր հատվածի աջակցության ենթակա ոլորտների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման յոթերորդ միջոցառման շրջանակում մասնավոր հատվածի աջակցության ենթակա ոլորտների տնտեսավարողներին միանվագ դրամաշնորհի տրամադրման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման յոթերորդ միջոցառման շրջանակում մասնավոր հատվածի աջակցության ենթակա ոլորտների անհատ ձեռնարկատերերին և ֆիզիկական անձանց միանվագ դրամական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված NN 2 և 3 հավելվածներով սահմանված՝

1) համապատասխանաբար միանվագ դրամաշնորհի և միանվագ դրամական աջակցության տրամադրման պատասխանատու մարմին է հանդիսանում Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն,

2) Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման յոթերորդ միջոցառման շրջանակում տրամադրվող միանվագ դրամաշնորհի և միանվագ դրամական աջակցության ֆինանսավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում (այնուհետև նաև՝ մինչև 2023 թվականի հուլիսի 17-ը ներառյալ ամենօրյա պարբերականությամբ՝ մինչև տվյալ օրվա ժամը 18:00-ն) Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել տեղեկություններ Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 13-ի N 70-Ն և 2023 թվականի մարտի 10-ի N 147-Ն որոշումներով հաստատված հատուկ կարգերի խախտում թույլ տված տնտեսավարողների, ինչպես նաև դրանց պատասխանատու անձանց մասով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով քննված գործերի արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ՝ նշելով խախտում թույլ տված տնտեսավարողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով քննված գործով կայացված որոշման տվյալները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2023 թվականի _____-ի N____-Ն որոշման

ՑԱՆԿ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Հ/Հ	Ոլորտ
1.	Մեծածախ և (կամ) մանրածախ առևտրի ծառայություններ (այդ թվում՝ առևտրի կենտրոնում կամ առևտրի իրականացման վայրում առք ու վաճառքի գործունեություն), բացառությամբ մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման, դեղատների, դեղատնային կրպակների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունների
2.	Բենզինի, դիզելային վառելիքի և հեղուկ գազի մեծածախ և (կամ) մանրածախ առևտուր, բացառությամբ, եթե մարտ ամսվա արդյունքներով իրացված քանակը կազմում է 500 և ավելի տոննա բենզին և (կամ) դիզելային վառելիք և (կամ) 5 000 կգ հեղուկ գազ
3.	Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն
4.	Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն
5.	Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում
6.	Էթիլային սպիրտի և սպիրտային խմիչքների արտադրություն
7.	Բուրավետացրած և (կամ) քաղցրացրած ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն
8.	Համեմունքների արտադրություն
9.	Ձվի արտադրություն
10.	Գյուղատնտեսական կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն
11.	Մանածագործական արտադրատեսակների արտադրություն
12.	Հագուստի արտադրություն
13.	Կահույքի արտադրություն
14.	Փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում
15.	Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
16.	Մետաղե շինարարական կոնստրուկցիաների արտադրություն
17.	Պլաստմասսե արտադրատեսակների արտադրություն
18.	Թթվածնի արտադրություն
19.	Մաքրող, լվացող ու փայլեցնող միջոցների արտադրություն
20.	Հագուստի և մանածագործվածքային արտադրատեսակների նորոգում, վերափոխում
21.	Կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
22.	Կենցաղային արտադրատեսակների նորոգում
23.	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, բացառությամբ մետաղական հանքաքարի արդյունահանման

24.	Լուսանկարչության բնագավառում գործունեություն
25.	Շինարարություն
26.	Բուսաբուծություն
27.	Գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքներ
28.	Փոստային և սուրհանդակային գործունեություն
29.	Կացության կազմակերպում, բացառությամբ, եթե 2023 թվականի 1-ին եռամսյակի արդյունքներով շրջանառության 60 և ավելի տոկոսը կազմում է պետական պատվերի շրջանակում ժամանակավոր կացության տրամադրումը
30.	Զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ
31.	Անշարժ գույքի գործակալություններ
32.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն
33.	Համակարգչային խաղերի կազմակերպում
34.	Ինտերնետ ակումբների գործունեություն
35.	Հարսանյաց հագուստի և հարսանեկան պարագաների վարձույթ
36.	Ավտոբուսներով և միկրոավտոբուսներով միջպետական ուղևորափոխադրումներ
37.	Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումներ
38.	Ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն
39.	Դարբնոցային գործունեություն
40.	Բնական գազով շենքային ջեռուցման կազմակերպման ծառայություններ
41.	Բժշկական լաբորատոր հետազոտությունների համար նմուշառման ծառայությունների մատուցում

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2023 թվականի _____-ի N____-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման յոթերորդ միջոցառման շրջանակում մասնավոր հատվածի աջակցության ենթակա ոլորտների տնտեսավարողներին միանվագ դրամաշնորհի տրամադրման կարգի (այսուհետ՝ Կարգ) նպատակն է՝ միանվագ դրամաշնորհի (այսուհետ՝ դրամաշնորհ) տրամադրման միջոցով աջակցել Կարգով սահմանված չափանիշներին համապատասխանող մասնավոր հատվածի տնտեսավարողներին՝ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման հետևանքով առաջացած դժվարություններով պայմանավորված աշխատատեղերի պահպանման ու աշխատավարձի և այլ եկամուտների վճարման հարցում:

2. Կարգի իմաստով շահառու են հանդիսանում Արցախի Հանրապետությունում 2022 թվականի դեկտեմբերի 12-ի դրությամբ Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի _____-ի N____-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում գործունեություն իրականացնող այն տնտեսավարողները (բացառությամբ պետական կամ համայնքային մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, հասարակական միավորումների, ոչ առևտրային կոոպերատիվների), որոնց կողմից՝

1) 2023 թվականի մարտ ամսվա համար Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ հարկային մարմին) ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով հայտարարագրված

աշխատանքային պայմանագրերով աշխատողների թվաքանակը (հաշվի չառնելով 2023 թվականի հունվարի 31-ից հետո աշխատանքի ընդունված աշխատողների թվաքանակը) կազմում է 2023 թվականի հունվար ամսվա համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով հայտարարագրված աշխատանքային պայմանագրերով աշխատողների թվաքանակի առնվազն 80 տոկոսը: Սույն ենթակետում նշված չափը հաշվարկելիս աշխատողների թվաքանակը կլորացվում է դեպի ներքև.

2) 2023 թվականի մարտ ամսվա համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով հաշվարկված աշխատավարձի ու դրան հավասարեցված եկամուտների մեծությունը կազմում է 2023 թվականի հունվար ամսվա համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով հաշվարկված աշխատավարձի ու դրան հավասարեցված եկամուտների մեծության (յուրաքանչյուր աշխատողի հաշվարկով) առնվազն 92.5 տոկոսը (բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության մեջ կամ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու դեպքերի), իսկ 2023 թվականի հունվար ամսվա համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով հաշվարկված աշխատավարձի ու դրան հավասարեցված եկամուտների մեծությունը 136 000 ՀՀ դրամից և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերից ու սոցիալական վճարից բարձր լինելու դեպքում՝ առնվազն 136 000 ՀՀ դրամ (հաշվի առնելով դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերն ու սոցիալական վճարը).

3) 2023 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներով քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողների մասով (հաշվի չառնելով 2023 թվականի հունվարի 31-ից հետո աշխատանքի ընդունված աշխատողների թվաքանակը) 2023 թվականի մարտ ամսվա համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով հայտարարագրված են քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում եկամուտներ.

4) աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողներին ամբողջությամբ վճարվել են հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով 2023 թվականի մարտ ամսվա համար հաշվարկված աշխատավարձը ու դրան հավասարեցված եկամուտները և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում եկամուտները (այսուհետ՝ եկամուտ).

5) ամբողջությամբ վճարվել են հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկով 2023 թվականի մարտ ամսվա համար հաշվարկված հարկերի ու սոցիալական վճարների գումարները:

3. Կարգի իմաստով շահառու չեն հանդիսանում Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 13-ի N 70-Ն և (կամ) Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 10-ի N 147-Ն որոշումներով հաստատված հատուկ կարգերի խախտում թույլ տված այն տնտեսավարողները (այսուհետ՝ տնտեսավարող), որոնց պատասխանատու անձինք որոշումն ուժի մեջ մտնելու կամ տնտեսավարողի կողմից Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 29-ի N 205-Ն որոշմամբ սահմանված աջակցության ստանալու օրվանից մինչև Կարգի 12-րդ կետով նախատեսված վճարման հանձնարարականի կազմմանը նախորդող օրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4. Աշխատողների թվաքանակը որոշվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված՝ համապատասխան ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ արտացոլված աշխատողների թվաքանակի (հաշվի առնելով նաև քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողների թվաքանակը) հիման վրա՝ հաշվի չառնելով 2023 թվականի հունվարի 31-ից հետո աշխատանքից ազատված Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների թվաքանակը:

5. Միաժամանակ Արցախի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունից դուրս գործունեություն իրականացնող տնտեսավարողների

դրամաշնորհի չափը հաշվարկելիս հաշվի են առնվում տնտեսավարողի մոտ աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով Արցախի Հանրապետությունում աշխատողների թվաքանակը ու վերջիններիս գծով վճարված (վճարման ենթակա) եկամուտների մեծությունը:

6. Մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում, իսկ մյուսը կամ մնացածը՝ ոչ) գործունեություն իրականացնող տնտեսավարողներին տրամադրվում է դրամաշնորհ, եթե 2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների իրացման շրջանառության մեջ որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում գործունեության (իրացման շրջանառության) տեսակարար կշիռը կազմում է առնվազն 40 տոկոսը, բացառությամբ բնական գազի ներկրման, փոխադրման, բաշխման և գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնողների:

7. Մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում, իսկ մյուսը կամ մնացածը՝ ոչ, և որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում գործունեության տեսակարար կշիռը կազմում է տնտեսավարողի՝ 2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընդհանուր գործունեության առնվազն 40 տոկոսը) գործունեություն իրականացնող տնտեսավարողների դրամաշնորհի չափը հաշվարկելիս հաշվի են առնվում տնտեսավարողի մոտ աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողների ընդհանուր թվաքանակը և վերջիններիս գծով վճարված (վճարման ենթակա) եկամուտների մեծությունը, բացառությամբ բնական գազի ներկրման, փոխադրման, բաշխման և գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնողների, որոնց դրամաշնորհի չափը հաշվարկելիս հաշվի են առնվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության մեջ ընդգրկված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողների թվաքանակը և վերջիններիս գծով վճարված (վճարման ենթակա) եկամուտների մեծությունը:

8. Կարգի իմաստով 2023 թվականի հունվար ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկ է համարվում 2023 թվականի մարտի 15-ի դրությամբ հարկային մարմին ներկայացված՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկը, իսկ 2023 թվականի մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկ է համարվում մինչև 2023 թվականի մայիսի 22-ը ներառյալ հարկային մարմին ներկայացված տվյալ հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկը:

9. Դրամաշնորհը տրամադրվում է՝

1) աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ յուրաքանչյուր աշխատողի հաշվարկով 136 000 ՀՀ դրամի և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով, իսկ 2023 թվականի մարտ ամսվա եկամուտների մեծությունը այդ չափից պակաս լինելու դեպքում՝ եկամուտների փաստացի մեծության և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով: Եթե 2023 թվականի մարտ ամսվա եկամուտների մեծությունը բարձր է 2023 թվականի հունվար ամսվա եկամուտների մեծությունից, ապա դրամաշնորհը տրամադրվում է 2023 թվականի հունվար ամսվա եկամուտների փաստացի մեծության և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով, բայց ոչ ավելի, քան 136 000 ՀՀ դրամի և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով.

2) քաղաքացիաիրավական պայմանագրերի դեպքում՝ յուրաքանչյուր աշխատողի հաշվարկով 136 000 ՀՀ դրամի և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով, իսկ 2023 թվականի մարտ ամսվա եկամուտների մեծությունը այդ չափից պակաս լինելու դեպքում՝ եկամուտների փաստացի մեծության և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով: Եթե 2023 թվականի մարտ ամսվա եկամուտների մեծությունը բարձր է 2023 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների միջին ամսական եկամուտների մեծությունից, ապա դրամաշնորհը տրամադրվում է 2023 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների միջին ամսական եկամուտների փաստացի մեծության և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու սոցիալական վճարի չափով, բայց ոչ ավելի, քան 136 000 ՀՀ դրամի և դրա հաշվարկային մեծությունից վճարվող հարկերի ու

սոցիալական վճարի չափով: Միջին ամսական եկամուտների մեծությունը հաշվարկվում է 2023 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների եկամուտների հանրագումարը երեքի բաժանելու միջոցով:

10. Եթե նույն ֆիզիկական անձը նույն գործատուի մոտ աշխատում է մեկից ավելի պայմանագրերով, ապա դրամաշնորհի հաշվարկը կատարվում է Կարգի 9-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված առավելագույն չափը հաշվի առնելով:

11. Դրամաշնորհ ստանալու նպատակով տնտեսավարողները հարկային մարմնի www.tax.nk.am պաշտոնական կայքէջում (այսուհետ՝ կայքէջ) տեղադրված ձևանմուշով էլեկտրոնային եղանակով ներկայացնում են դիմում՝ կցելով վճարային տեղեկագիրը, անկանխիկ վճարումների դեպքում՝ նաև առևտրային բանկ ներկայացված վճարման հանձնարարագիրը: Սույն կետով սահմանված դիմումները (այդ թվում՝ ճշտված) կարող են ներկայացվել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

12. Հարկային մարմնի կողմից դիմումները ստանալուց հետո, տասը աշխատանքային օրվա ընթացքում, ստուգվում են շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերը, կատարվում դրամաշնորհի մեծության հաշվարկ, կազմվում վճարման հանձնարարական և երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում առևտրային բանկ՝ բացառությամբ Կարգի 14-րդ կետով սահմանված դեպքի: Վճարման հանձնարարականի ներկայացումը հավաստում է դրամաշնորհի տրամադրման քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման փաստը:

13. Դիմումը մերժելու դեպքում (եթե տնտեսավարողն ընդգրկված չէ շահառուների ցանկում) տասը աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է էլեկտրոնային հաղորդագրություն՝ բացառությամբ Կարգի 14-րդ կետով սահմանված դեպքի:

14. Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 13-ի N 70-Ն և (կամ) 2023 թվականի մարտի 10-ի N 147-Ն որոշումներով հաստատված հատուկ կարգերի խախտում թույլ տված տնտեսավարողների մասով Կարգի 12-րդ և 13-րդ կետերով սահմանված ժամկետները հաշվարկվում են Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով քննված գործերի

արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տրամադրած տեղեկությունները հարկային մարմին մուտքագրվելու օրվանից:

15. Դրամաշնորհի գումարը շահառուին փոխանցելու նպատակով հարկային մարմնի կողմից առևտրային բանկ ներկայացվող վճարման հանձնարարականում նշվում են հետևյալ տվյալները.

1) շահառուի անվանումը (անունը, ազգանունը).

2) շահառուի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

3) հաշվարկային հաշվի համարը.

4) դրամաշնորհի գումարի չափը:

16. Կարգի շրջանակում դրամաշնորհ ստացած շահառուների տվյալները հրապարակվում են կայքէջում:

17. Դրամաշնորհի գումարը չի կարող արգելադրվել (հանդիսանալ արգելանքի առարկա), բռնագանձվել կամ հաշվանցվել շահառուի պարտավորությունների դիմաց:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

Հավելված N 3
Արցախի Հանրապետության կառավարության
2023 թվականի _____-ի N____-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման յոթերորդ միջոցառման շրջանակում մասնավոր հատվածի աջակցության ենթակա ոլորտների անհատ ձեռնարկատերերին և ֆիզիկական անձանց միանվագ դրամական աջակցության տրամադրման կարգի (այսուհետ՝ Կարգ) նպատակն է՝ միանվագ դրամական աջակցության (այսուհետ՝ աջակցություն) տրամադրման միջոցով աջակցել Կարգով սահմանված չափանիշներին համապատասխանող անհատ ձեռնարկատերերին և ֆիզիկական անձանց:

2. Կարգի իմաստով շահառու են հանդիսանում՝

1) բացառապես Արցախի Հանրապետությունում 2022 թվականի դեկտեմբերի 12-ի դրությամբ Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի _____-ի N____-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում փաստացի գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերի), ովքեր 2023 թվականի ապրիլի 1-ին նախորդող առնվազն 15 օրերին չեն հանդիսացել աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողներ.

2) 2022 թվականի դեկտեմբերի 12-ի դրությամբ կամ 2023 թվականի հունվար-մարտ ամիսներին որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում փաստացի գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերն ու ֆիզիկական անձինք, ովքեր 2023 թվականի ապրիլի 1-ին նախորդող առնվազն 15 օրերին չեն հանդիսացել աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողներ:

3. Կարգի իմաստով շահառու չեն հանդիսանում Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 13-ի N 70-Ն և (կամ) Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 10-ի N 147-Ն որոշումներով հաստատված հատուկ կարգերի խախտում թույլ տված այն անհատ ձեռնարկատերերը (այդ թվում՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք), որոնց պատասխանատու անձինք որոշումն ուժի մեջ մտնելու կամ տնտեսավարողի կողմից Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 29-ի N 205-Ն որոշմամբ սահմանված աջակցության ստանալու օրվանից մինչև Կարգի 8-րդ կետով նախատեսված վճարման հանձնարարականի կազմմանը նախորդող օրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4. Աջակցությունը տրամադրվում է՝

1) անհատ ձեռնարկատերերին (բացառությամբ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերի ու ֆիզիկական անձանց)՝ 136 000 ՀՀ դրամի չափով.

2) արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերին ու ֆիզիկական անձանց՝ 68 000 ՀՀ դրամի չափով:

5. Մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում, իսկ մյուսը կամ մնացածը՝ ոչ) գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերին տրամադրվում է աջակցություն, եթե 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների իրացման շրջանառության մեջ որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված ոլորտներում գործունեության (իրացման շրջանառության) տեսակարար կշիռը կազմում է առնվազն 40 տոկոսը:

6. Կարգի իմաստով 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների համար անհատ ձեռնարկատիրոջ կողմից մինչև 2023 թվականի մարտի 1-ը ներառյալ Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ հարկային մարմին) ներկայացված իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության մեջ արտացոլված իրացման շրջանառությունները:

7. Անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք հարկային մարմնի www.tax.nk.am պաշտոնական կայքէջում (այսուհետ՝ կայքէջ) տեղադրված ձևանմուշով էլեկտրոնային եղանակով ներկայացնում են դիմում՝ աջակցություն ստանալու համար: Սույն կետով սահմանված դիմումները (այդ թվում՝ ճշտված) կարող են ներկայացվել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

8. Հարկային մարմնի կողմից դիմումները ստանալուց հետո, տասը աշխատանքային օրվա ընթացքում, ստուգվում են շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերը, կատարվում աջակցության մեծության հաշվարկ, կազմվում վճարման հանձնարարական և երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում առևտրային բանկ՝ բացառությամբ Կարգի 11-րդ կետով սահմանված դեպքի:

9. Աջակցությունը տրամադրվում է՝

1) անկանխիկ եղանակով՝ առևտրային բանկում շահառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով.

2) կանխիկ եղանակով՝ «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ Արցախի Հանրապետությունում գործող մասնաճյուղերի միջոցով, եթե շահառուն առևտրային բանկում չունի հաշվարկային հաշիվ:

10. Դիմումը մերժելու դեպքում (եթե անհատ ձեռնարկատերը, այդ թվում՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերը կամ ֆիզիկական անձը, ընդգրկված չէ շահառուների ցանկում) տասը աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է էլեկտրոնային հաղորդագրություն՝ բացառությամբ Կարգի 11-րդ կետով սահմանված դեպքի:

11. Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 13-ի N 70-Ն և (կամ) 2023 թվականի մարտի 10-ի N 147-Ն որոշումներով հաստատված հատուկ կարգերի խախտում թույլ տված անհատ ձեռնարկատերերի (այդ թվում՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց) մասով Կարգի 8-րդ և 10-րդ կետերով սահմանված ժամկետները հաշվարկվում են Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված

կարգով քննված գործերի արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տրամադրած տեղեկությունները հարկային մարմին մուտքագրվելու օրվանից:

12. Աջակցության գումարը շահառուին փոխանցելու նպատակով հարկային մարմնի կողմից առևտրային բանկ ներկայացվող վճարման հանձնարարականում նշվում են հետևյալ տվյալները.

1) շահառուի անունը, ազգանունը.

2) շահառուի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

3) հաշվարկային հաշվի համարը, իսկ առևտրային բանկում հաշվարկային հաշիվ չունենալու դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի սերիան և (կամ) համարը.

4) աջակցության գումարի չափը:

13. Կարգի շրջանակում աջակցություն ստացած շահառուների տվյալները հրապարակվում են կայքէջում:

14. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (հանդիսանալ արգելանքի առարկա), բռնագանձվել կամ հաշվանցվել շահառուի պարտավորությունների դիմաց:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**